Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-313-02.05.2018-ՏՀ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաստատել պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի կատարման 2017 թվականի տարեկան հաշվետվությունը (կցվում է):

ՀՀ կառավարություն

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Պետական գույքի մասնավորեցման ծրագրի կատարման մասին սույն հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) ներկայացվում է «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի համաձայն:

2. Հաշվետվությունն ընդգրկում է 2017թ. օրացուցային տարին (այսուհետ՝ հաշվետու ժամանակահատված):

3. Հաշվետու ժամանակահատվածում գործողության մեջ են եղել «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և նոր ընդունված «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ Ծրագիր): «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Եթե ծրագրի գործողության ժամկետը լրանալուց հետո նոր ծրագիր չի ընդունվում, ապա շարունակում է գործել նախորդ ծրագիրը» և «նախորդ ծրագրերի ցանկերում ընդգրկված, սակայն չմասնավորեցված ընկերությունները (ձեռնարկությունները) և «փոքր» օբյեկտները նոր ծրագրի մասն են վերջինիս ուժի մեջ մտնելու պահից»:

4. Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ կառավարության կողմից ընդունվել է Ծրագրում ընդգրկված պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի մասնավորեցման վերաբերյալ 8 որոշում, որից՝ ուղղակի ձևով մասնավորեցվել են 2 ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը:

5. Հաշվետու ժամանակահատվածում մասնավորեցումից ստացված միջոցները կազմել են 66,415 մլն դրամ, որից՝ ընկերությունների /կազմակերպությունների/ մասնավորեցումից ստացված միջոցները՝ 36,847 մլն դրամ, նախորդ տարիներին մասնավորեցված «փոքր» օբյեկտներից հաշվետու ժամանակահատվածում տարաժամկետ վճարման ենթակա վճարումներից ստացված միջոցները՝ 29,568 մլն դրամ:

6. Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի սեփականաշնորհման հաշվին մուտքագրվել է 62,334 մլն դրամ:

7. Համաձայն «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-127-Ն և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-126-Ն օրենքների՝ 2017 թվականի ընթացքում մասնավորեցումից ստացված միջոցներից համայնքների բյուջեներ է փոխանցվել 4,081 մլն դրամ:

8. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված կարգով յուրաքանչյուր մասնավորեցվող ընկերության և գույքի վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության ինտերնետային կայքում հրապարակվել է համապատասխան տեղեկատվություն:

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

1. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

9. Ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցման կատարողականը

1) Հաշվետու ժամանակահատվածում ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցվել է Ծրագրում ընդգրկված 2 ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը:

2) Ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցված ընկերության մասին տեղեկությունը ներկայացված է սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող Հավելված 1-ում:

10. Մասնավորեցման գործարքների արդյունքում ստանձնած պարտավորությունների կատարողականը

1) Պետական գույքի մասնավորեցման պայմանագրերով 2017 թվականի ընթացքում ներդրումային, սոցիալական երաշխիքների ապահովման և այլ տիպի պարտավորություններ են ստանձնել թվով 10 գնորդ:

2) 5 գնորդների կողմից պայմանագրերով ստանձնած ներդրումային պարտավորությունները կազմել են 203 մլն դրամ և 17 409 130 ԱՄՆ դոլար: Սոցիալական երաշխիքների ապահովման մասով 2 գնորդի կողմից նախատեսվել է ստեղծել 26 աշխատատեղ, 4 գնորդ ստանձել է պրոֆիլի պահպանման պարտավորություններ:

3) Մասնավորեցման պայմանագրերով 2017 թվականի ընթացքում դրամով նախատեսված պարտավորությունները սահմանված ժամկետում կատարվել են 1 գնորդի կողմից, որի կատարած ներդրումները նախատեսված 25 մլն դրամի փոխարեն կազմել են 32,124 մլն ՀՀ դրամ,

4) ԱՄՆ դոլարով նախատեսված ներդրումային պարտավորությունները 1 գնորդի կողմից ստանձնած 17 309 130 ԱՄՆ դոլարի փոխարեն կատարվել է՝ 5 176 430 ԱՄՆ դոլար (մասնակի է կատարվել, ներդրումային պարտավորությունների կատարման ժամկետների փոփոխման հարցը գտնվում է քննարկման փուլում), իսկ 1 գնորդի կողմից ստանձնած 100 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի պարտավորություն չի կատարվել, որի արդյունքում հաշվարկվել է 20 հազ.ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի տույժ (գործը գտնվում է դատական վարույթում):

5) Սոցիալական երաշխիքների ապահովման մասով՝ պարտավորությունները կատարվել են 2 գնորդների կողմից, նախատեսված 26 աշխատատեղի փոխարեն ստեղծվել է ընդհանուր առմամբ 34 աշխատատեղ:

6) 4 գնորդների կողմից ստանձնված պրոֆիլի պահպանման պարտավորությունները կատարվել են:

7) Նախատեսված ներդրումները սահմանված ժամկետում չի կատարվել 2 գնորդի կողմից, արդյունքում հաշվարկվել է՝ 35 600 000 ՀՀ դրամի տուգանք (գործերը գտնվում են դատական վարույթում):

8) Մասնավորեցված օբյեկտների գնորդների կողմից հաշվետու ժամանակահատվածում կատարման ենթակա ներդրումային պարտավորությունների և սոցիալական երաշխիքների կատարման մասին տեղեկությունները, ըստ առանձին ընկերությունների և օբյեկտների, ներկայացված են սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող Հավելված 2-ում:

11. Ընկերությունների լուծարման և սնանկացման գործընթացը

1) «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընկերությունները չմասնավորեցվելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է որոշում ընդունել այդ ընկերությունների լուծարման մասին:

2) Հաշվետու ժամանակահատվածում լուծարման, սնանկացման գործընթացում են գտնվել Ծրագրում ընդգրկված 11 առևտրային կազմակերպություն:

3) Հաշվետու ժամանակահատվածում նշված կազմակերպություններից՝ 4 կազմակերպության լուծարման գործընթացն ավարտվել է, 3 կազմակերպություն ճանաչվել են սնանկ:

4) Հաշվետու ժամանակահատվածում նշված լուծարվող կազմակերպություններում մարվել է շուրջ 78,674 մլն դրամ կրեդիտորական պարտք, որից՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 18,216 մլն դրամ, համայնքային բյուջե՝ 594,0 հազ. դրամ, աշխատավարձի գծով՝ 44,704 մլն դրամ և այլ կրեդիտորական պարտք 15,160 մլն դրամ:

5) Ընկերությունների՝ հաշվետու ժամանակահատվածում լուծարման և սնանկացման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները ներկայացված են սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող Հավելված 3-ում:

2. «ՓՈՔՐ» ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԸ

12. «Փոքր» օբյեկտների մասնավորեցման կատարողականը

1) Համաձայն Ծրագրի 5-րդ հոդվածի՝ մասնավորեցման նախորդ ծրագրերի ցանկերում ընդգրկված, սակայն չմասնավորեցված «փոքր» օբյեկտները համարվում են Ծրագրի մաս և ենթակա են մասնավորեցման «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2) Հաշվետու ժամանակահատվածում «փոքր» օբյեկտ չի մասնավորեցվել:

3) Նախորդ տարիներին մասնավորեցված «փոքր» օբյեկտներից հաշվետու ժամանակահատվածում տարաժամկետ վճարման ենթակա վճարումներից ստացված պետական բյուջեի եկամուտները կազմել են 29,568 մլն դրամ:

Հավելված 1

«Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի
կատարման 2017 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

Տ Ե Ղ Ե Կ Ու Թ Յ Ու Ն Ն Ե Ր
ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՃԵՌՈՎ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎԱԾ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Ընկերության (պետական գույքի) անվանումը, ծածկագիրը՝ըստ Ծրագրի	Գտնվելու վայրը	Պետական կառավարման մարմինը	ՀՀ կառավարության որոշման համարը, ամսաթիվը	Պետական գույքի գնահատ-վածարժեքը (հազ. դրամ)	Վաճառ-քի գինը (հազ. դրամ)	Ընկերության հաշվեկշռում ամրագրված պարտա-վորություն-ները (հազ. դրամ)	Գնորդը
1	2	3	4	5	6	7	8	10
1.	«Բյուրեղ » հանքային ջրի» ՓԲԸ-ի 9.034 տոկոս պետական բաժնեմասը (ծածկագիր՝20370)	Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, գյուղ Բջնի	Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 17-ի N 1009-Ա որոշում	5498	5498	60	Ռուբեն Հայրապետյան և Արգիշտի Սահինյան

2	«Ընդերքաբան» ԲԲԸ-ից առանձնացված «Ընդերքաբանի Մեղրաձորի բազա» ՓԲԸ-ի100 տոկոս պետական բաժնեմասը (ծածկագիր՝6213 0)	քաղ. Երևան, Չարենցի 46	քաղ. Երևան, Չարենցի 46	Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 17-ի N 1004-Ա որոշում	5443	5443	1317 ,7	Հովսեփ Սահակյան

Հավելված 2

«Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի
կատարման 2017 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

Տ Ե Ղ Ե Կ Ու Թ Յ Ու Ն Ն Ե Ր

ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԱՆԱՎԱՐՏ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՆՈՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Մասնավորեցված գույքի և գնորդի անվանումը	Նախատեսված պայմանագային պարտավորությունները	Կատարման ժամկետը	Կատարման ընթացքը
1.	Հրազդանի կինոցանցի «Հրազդան» կինոթատրոնի գույք Կոտայքի մարզ,ք. Հրազդան, Սպանդարյան փող.: Գնորդ՝ Բագրատ Առաքելյան, Կոտայքի մարզ, քաղ.Հրազդան, Շահումյան փող., տ. 110: Պայմանագիր՝ 225-Մ 20.01.2005թ.	Պրոֆիլի պահպանում	20.01.2017թ.	Պահպանվել է
2.	«Գյուղատնտեսական տեխնիկայի փորձարկում և ներդրում» ՓԲԸ ՀՀ Կոտայքի մարզ, ք.Եղվարդ Երևանյան 2 Գնորդ՝ «ԱԳՐՈՀՈԼԴԻՆԳ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ Պայմանագիր՝ 874-Ու 25.02.2016թ	100 000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի ներդրում	25.02.2017թ.	Չի կատարել հաշվարկվել՝է 20 000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի տույժ: Գործը գտնվում է դատական վարույթում

3.	«Ռեմդիզել» ՓԲԸ Կոտայքի մարզ,գ.Բալահովիտ Գնորդ՝ «ԲԻԶՆԵՍ-ԼԱՅՆ» ՍՊԸ Պայմանագիր՝ 857-Ու 13.08.2008թ	25 000 000 ՀՀ դրամի ներդրում	25.08.2017 թ.	Չի կատարվել հաշվարկվել է՝ 5 000 000 ՀՀ դրամի տույժ: Գործը գտնվում է դատական վարույթում
4.	«Լեռնամետալոգիայի ինստիտուտ» ՓԲԸ Գնորդ՝«Արմենիան Քամփըը Փրոգրամ» ՓԲԸ «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ Պայմանագիր՝ 435-Ու 22.10.2002թ.	Պրոֆիլի պահպանում	22.10.2017թ.	Պահպանվել է.
5.	«Ս.Վ.Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» ՓԲԸ Ք.Երևան Ֆուչիկի 30 Գնորդ՝ «Ս.Վ.Մալայանի ակնաբուժական կենտրոն» ՓԲԸ Ալեքսանդր Մալայան Պայմանագիր՝ 601-Ու 07.10.2003թ.	Պրոֆիլի պահպանում	07.10.2017թ.	Պահպանվել է
6.	«Գուգարք»կարի ԱՄ-ի կազմից առանձնացված « Բազումի արտադրամաս»-ի գույք ՀՀ Լոռու մարզ, Բազում համայնք, 1-ին փողոց, թիվ 17 Գնորդ ՝ Դավիթ Սիմոնյան Ք.Վանաձոր, Բաթումի փող., 2-րդ շ., 3բն. Պայմանագիր՝ 875-Ու 24.11.2016թ.	25 000 000 ՀՀ դրամի ներդրում Ստեղծել 6 աշխատատեղ՝ ամսականը միջին 75 000 ՀՀ դրամ աշխատավարձով Ներդրումային պարտավորությունների կատարման ընթացքում ստեղծել կազմակերպություն	24.11.2017թ.	Կատարված է՝ 32 124 000 ՀՀ դրամ Ստեղծվել է՝ 8 աշխատատեղ, 75 000 ՀՀ դրամ աշխատավարձով Ստեղծել է «Վան Ֆուդ» ՍՊԸ

7.	«Ռադիո» ՓԲԸ Գեղարքունիքի մարզ,գ.Նորատուս Գնորդ՝ «ԵվրոՊրեսս Գրուպ»ՍՊԸ Վենդթ պող.,56, 1203, ժնև, Շվեցարիա տնօրեն՝ Անուշավան Խաչատրյան Պայմանագիր՝ 864-Ու 28.12 2010թ.	Պրոֆիլի պահպանում	29.12.2017թ.	Պահպանվել է
8.	«Դվին հյուրանոցային համալիր» ՓԲԸ, ք.Երևան, Պարոնյան փող.40 Գնորդ՝ «ՍԻ Սի Ձի Կովկասյան Կոմունիկացիոն խումբ» ՍՊԸ Կիպրոս,Նիկոսյա Պայմանագիր՝ 686-ՈՒ 14.05.2004թ.	17 309 130 ԱՄՆ դոլարի ներդրում	29.12.2017թ.	Կատարված է՝ 5 176 430 ԱՄՆ դոլար Կատարվել է մասնակի, ներդրումային պարտավորությունների կատարման ժամկետների փոփոխման հարցը գտնվում է քննարկման փուլում
9.	«Գուգարքի կարի ԱՄ-ի կազմից առանձնացված «Դարպասի արտադրամաս»-ի գույք Լոռու մարզ, Դարպաս համայնք Գնորդ՝«Վաբա» ՍՊԸ քաղ.Վանաձոր, Թումանյան թիվ 12 Պայմանագիր՝ 870-Ու 03.02.2014թ.	Ստեղծել 20 աշխատատեղ՝ 60 000 ՀՀ դրամ ամսական աշխատավարձով	29.12.2017թ.	Ստեղծվել է՝ 26 աշխատատեղ, 73 000 ՀՀ դրամ աշխատավարձով
10.	ՀՀ մշակույթի նախարարության տնօրինության «Գանձաքար» կինոթատրոնի գույք ՀՀ Տավուշի մարզ, Գաանձաքար համայնք Գնորդ՝ Տավուշի մարզի Գանձաքար համայնք Պայմանագիր՝ 871-ՈՒ 17.02.2014թ.	153 000 000 ՀՀ դրամ ներդրում	31.12.2017թ	Չի կատարել Հաշվարկվել է՝ 30 600 000 ՀՀ դրամ տուգանք Գործը գտնվում է դատական վարույթում

Հավելված 3

«Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի կատարման 2017 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

հաշվետու ժամանակահատվածում լուծարման և սնանկացման գործընթացի մասին

Հ/Հ	Ծածկագիրը՝ ըստ Ծրագրի	Ընկերության (կազմակերպության) անվանումը	Հիմնադրի լիազորությունները այլ պետական մարմնից վերապահվել են	Լուծարման մասին ՀՀ կառավարության որոշման համարը, ամսաթիվը	Լուծարման ընթացքը
1	2	3	4	5	6
1.	60216	Գորիսի հրուշակեղենի ՊՁ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 10-ի N 137-Ա որոշում.	Լուծարված
2.	11039	Փոքրաշենի բտման տնտեսություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 23-ի N 348-Ն որոշում.	Լուծարված
3.	90036	«Գեոկոմպլեքս» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի N 997-Ա որոշում	Լուծարված
4.	90035	«Էկոսերվիս» ՓԲԸ-ի «Գեոմատակարար» ԴՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 929-Ա որոշում	Գտնվում է լուծարման գործընթացում:
5.	62061	«Գրանիտ»ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1379-Ա որոշում	Գտնվում է լուծարման գործընթացում:
6.	20904.8	«Արթիկի նավթամթերք» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 971-Ա որոշում	Գտնվում է լուծարման գործընթացում:
7.	60155	«Վայոցձորառսպաս» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 16-ի N 145-Ա որոշում	Լուծարված
8.	90111	«Օշական» մանկական վերականգնողական կենտրոն» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2017թվականի օգոստոսի 3-ի N 940-Ա որոշում	Գտնվում է լուծարման գործընթացում:
9.	20000	«Հայգազարդ» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N 1329-Ա որոշում	Սնանկ:
10	21805.1	«Կապուտակ» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ Գեղարքունիքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 31.03.2016թ. վճիռ	Սնանկ:

11	62127	«Զրհան» ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	ՀՀ Արմավիրի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 11.01.2011թ. վճիռ	Սնանկ: